ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-25/01» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2025 թվականի հուլիսի 21-ին կնքված N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-25/01» պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2026 թվականի հունիսի 4-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար հատկացվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն՝

- Պայմանագրի 24.03.2026թ. կնքված N 5 համաձայնագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ N 1 հավելվածը հաստատվել է նոր խմբագրությամբ:
- Աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից՝ 40 օրացուցային օր:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 8.5 և 8.14 կետեր

Պատվիրատու՝ Դատական դեպարտամենտ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 6

21.07.2025թ. ԿՆՔՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-25/01» ՊԱՅՄԱՆԱԳՐԻ 24.03.2026թ. ԿՆՔՎԱԾ N 5 ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան « 04 » « 06 » 2026թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՎԱԳ-ՇԻՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Օ. Ավագյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 21.07.2025թ. կնքված N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-25/01» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.14 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով Բարձրագույն դատական խորհրդի՝ ք. Երևան, Կորյունի 17 հասցեում տեղակայված վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքների (այսուհետ՝ Աշխատանք) կատարման անհրաժեշտությունը, ինչպես նաև՝ Կապալառուի կողմից ներկայացված կատարվելիք աշխատանքների նախահաշիվը (այսուհետ՝ Նախահաշիվ) և Պայմանագրով սահմանված 80 000 000 (ութսուն միլիոն) ՀՀ դրամ առավելագույն գնից՝ համաձայն հաստատված Նախահաշվի 23 046 651 (քսաներեք միլիոն քառասունվեց հազար վեց հարյուր հիսունմեկ) ՀՀ դրամի չափով ֆինանսական միջոցների առկայությունը.

1.1. Պայմանագրի 24.03.2026թ. կնքված N 5 համաձայնագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ N 1 հավելվածը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի N 1 հավելվածի:

1.2. Աշխատանքների կատարման ժամկետ սահմանել Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից՝ 40 օրացուցային օր:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև Համաձայնագիրն ուժի մեջ մտնելը՝ 04.05.2026թ.-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում Կապալառուի կողմից կատարված աշխատանքների դիմաց վճարումն իրականացվում է Համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Համաձայնագիրը կազմված է 3 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 1 հավելվածը հանդիսանում է N 6 համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դպրական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Ն. Գալստյան

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԱՎԱԳ-ՇԻՆ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Հրազդան, Քաղսի 4թղմ. 88
ՀՎՀՀ՝ 03022928
Հ/Հ՝ 163158050159
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ

Տնօրեն՝ Օ. Ավագյան

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 1
« 04 » « 06 » 2026թ. կնքված N 6 համաձայնագրի

(Հավելված N 1
« 24 » « 03 » 2026թ. կնքված N 5 համաձայնագրի)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	ընդամենը
1	45461100/6	շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ /Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի և Երևան քաղաքում տեղակայված առանձնացված ստորաբաժանումների վարչական շենքերի ընթացիկ նորոգման աշխատանքներ/			12507945	12507945	12507945	35554596	35554596	35554596	35554596	35554596	35554596	35554596	35 554 596

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Ն. Գալստյան

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԱՎԱԳ-ՇԻՆ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Հրազդան, Քաղսի 4թղմ. 88
ՀՎՀՀ՝ 03022928
Հ/Հ՝ 163158050159
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ

Տնօրեն՝ Օ. Ավագյան

(ստորագրություն)
Կ.Տ